ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից 2013թ. կազմակերպվող գիտական միջոցառումների ցանկ

- **2013 թ.-ի ապրիլի 23-ին** ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում կկայանա ՀՀ ԳԱԱ 2012թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքներին նվիրված տարեկան ընդհանուր ժողով: Գիտությունների բաժանմունքների տարեկան ընդհանուր ժողովները տեղի կունենան ապրիլի 22-ին

- **2013թ.-ի մայիսի 12-16-ը** ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքը Ծաղկաձորում կազմակերպում են "Երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության ժամանակակից խնդիրները" երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով, նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին

- **2013 թ.-ի հունիսի 18-20-ը** ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը Երևանում կազմակերպում է Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Հայկական հարցի միջազգայնացման 1912-1923 թթ. փուլին

- **2013թ.-ի հունիսի 27-28-ը** ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը (Երևան) կազմակերպում է երիտասարդ գիտնականների գիտաժողով "Մոլեկուլային կենսատեխնոլոգիայի և կենսաքիմիայի նոր ասպեկտները" թեմայով, նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին

- **2013 թ.-ի հուլիսի 15-ին** ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը Արզականում կազմակերպում է Երիտասարդ գիտաշխատողների XXXIV գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 70-ամյակին

- **2013թ.-ի օգոստոսի 24-31-ը** ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը, Հայաստանի Ամերիկյան համալսարանը, Ռուս- Հայակական (Սլավոնական) համալսարանը կազմակերպում են "Մաթեմատիկան Հայաստանում.Ձեռքբերումներն ու հեռանկարները" միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին (Ծաղկաձոր, Հայաստան): Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ կայքում. http://mathconf.sci.am/

- **2013թ.-ի օգոստոսի 26-29-ը** ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը Բյուրականում կազմակերպում է "Անկայուն օբյեկտներ" կոլոքվիում՝ նվիրված ակադեմիկոս Լ. Վ. Միրզոյանի 90-ամյա հոբելյանին

- **2013 թ.-ի սեպտեմբերի 14-16-ը** ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը Երևանում կազմակերպում է հոբելյանական նիստ և երիտասարդ լեզվաբանների գիտա¬ժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստի¬տուտի հիմնադրման 70-ամյակին

- **2013թ.-ի սեպտեմբերի 16-20-ը** ՀՀ ԳԱԱ Մ.Գ. Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքը կազմակերպում են "Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ" III միջազգային գիտաժողովը, նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին

- **2013թ.-ի սեպտեմբերի 23-24-ը** ՀՀ ԳԱԱ Երիտասարդ գիտնականների խորհուրդը և ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը կազմակերպում են երիտասարդական գիտաժողով "Բույսերի արտադրության ինովացիոն տեխնոլոգիաների ժամանակակից հիմնախնդիրները" թեմայով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին, որը տեղի կունենա ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտում

- **2013 թ.-ի սեպտեմբերի 23-27-ը** ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը անց է կացնում "Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ՝ CSIT-2013" 9-րդ միջազգային գիտաժողով: Մանրամասներին կարելի է ծանոթանալ http://iiap.sci.am կայքում

- **2013թ.-ի սեպտեմբերի 23-27-ը** ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը կազմակերպում է "RREPS-13" (ՌԴ Տոմսկի Ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ) և "Meghri-13" միջազգային գիտաժողովներ: Մանրամասներին կարելի է ծանոթանալ www.iapp.am կայքում

- **2013թ.-ի սեպտեմբերի 27-28-ը** ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը կազմակերպում է Գ.Ա.Ասկարյանի անվ. երիտասարդ գիտնականների միջազգային դպրոց: Մանրամասներին կարելի է ծանոթանալ www.iapp.am կայքում

- **2013թ.-ի սեպտեմբերի 27-29-ը** ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը Երևանում կազմակերպում է Միջազգային երիտասարդական գիտաժողով "Շրջակա միջավայրի հիմնահարցերը և ազգաբնակչության ռիսկի խմբերի առանձնացումը" թեմայով

- **2013 թ.-ի սեպտեմբերի 27-29-ը** ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը Երևանում կազմակերպում է Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջանը և համերգ՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին

- **2013 թ.-ի սեպտեմբերի 27-30-ը** Դոնի Ռոստովում (Ռուսաստան) տեղի կունենա "11th EAST-WEST DESIGN & TEST (EWDTS 2013)" սիմպոզիումը

- **2013 թ.-ի հոկտեմբերի 1-4-ը** ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտը, ՀՀ կիրառական և տեսական մեխանիկայի ազգային կոմիտեն, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, Կիրառական և տեսական մեխանիկայի ռուսական ազգային կոմիտեն, Ռուսաստանի ազգային ակադեմիայի դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի գիտական խորհուրդը, Ռուսաստանի ազգային ակադեմիայի մեխանիկայի պրոբլեմների Ա.ՅԻ.Իշլինսկու անվան ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը անց են կացնում "Երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով-դպրոց՝ ՄԵԽԱՆԻԿԱ-2013 "(Ծաղկաձոր, Հայաստան): Մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.mechins.sci.am կայքում

- **2013թ.-ի հոկտեմբերի 1-4-ը** ՀՀ ԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" գիտաարտադրական կենտրոնը ք. Երևանում կազմակերպում է երիտասարդ գիտնականների 2-րդ միջազգային գիտաժողով «Երիտասարդների ավանդը կենսատեխնոլոգիայի զարգացման գործընթացում»՝ նվիրված ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 70 ամյակին

- **2013թ.-ի հոկտեմբերի 4-6-ը** ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը "Գյումրին ԱՊՀ 2013թ. Մշակութային մայրաքաղաք" ծրագրի շրջանակներում կազմակերպում է "Պատմամշակութային ժառանգություն եւ արդիականություն" միջազգային գիտաժողովը եւ "ԱՊՀ երկրների երիտասարդ պատմաբանների եւ հնագետների դպրոց", որը կգործի հոկտեմբերի 1-7-ը: Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետեւյալ կայքում՝ http://shirakcenter.sci.am

- **2013 թ.-ի հոկտեմբերի 7-11-ը** ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը և Հայկական աստղագիտական ընկերությունը Բյուրականում կազմակերպում են "Ակտիվ գալակտիկական միջուկների բազմալիքային շրջահայություններ և ուսումնասիրություն" IAU 304 սիմպոզիումը: Մանրամասներին կարելի է ծանոթանալ www.iaus304.aras.am, www.bao.am կայքերում

- **2013թ.-ի հոկտեմբերի 8-11-ը** ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը Աշտարակում կազմակերպում է "Լազերային ֆիզիկա-2013" միջազգային կոնֆերանսը: Մանրամասներին կարելի է ծանոթանալ www.ipr.sci.am կայքում

- **2013 թ.-ի հոկտեմբերի 17-19-ը** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան կազմակերպում է Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը՝ “Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները” խորագրով

- **2013թ.-ի հոկտեմբերի 21-22-ը** ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը և Մոլեկուլային և բջջային կենսաբանության և իմունաբանության հայկական ասոցիացիան Երևանում կազմակերպում են երիտասարդ գիտնականների գիտաժողով "Մոլեկուլային և բջջային կենսաբանության զարգացման հեռանկարներ-4" թեմայով, նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին

- **2013թ.-ի հոկտեմբերի 23-24-ը** ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի կունենա Երիտասարդ արևելագետների 33-րդ գիտական նստաշրջանը

- **2013 թ.-ի հոկտեմբերին** ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ՀՀ ԳԱԱ հայագի¬տության և հասարակական գիտությունների բաժանմունքի հետ կազմակերպում է Միջազգային գիտաժողով՝ նվիրված Գյուլիստանի պայմանագրի 200-ամյակին

- **2013 թ.-ի նոյեմբերի 20-21-ը** ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը Երևա¬նում համատեղ կազմակերպում են երիտասարդ գիտնականների գիտաժողով "Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում" թեմայով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին

- **2013 թ.-ի նոյեմբերին** ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը Երևանում կազմակերպում է Հանրապետական գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 70-ամյակին

- **2013թ.-ի դեկտեմբերի 3-4-ը** ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոն կազմակերպում է "Փորձաքննությունների ազգային բյուրոյում կազմավորված փորձագիտական տվյալների բազաների կազմակերպչական և գիտագործնական փորձի ուսումնասիրությունը, դրանց համադրումը հանրապետությունում առկա դատափորձագիտական բազաների հետ: Հանրապետությունում առկա դատափորձագիտական տվյալների բազաների՝ եվրոպական դատափորձագիտական տվյալների բազաներում ինտեգրման նախադրյալները" թեմայով երիտասարդական գիտաժողով

- **2013թ.-ի դեկտեմբերի 3-6-ը և 12-16-ը** ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը ՅՈՒՆԵՍԿՈ-ի ծրագրի շրջանակներում Երևանում կազմակերպում է

ուսուցողական սեմինար "Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը քաղցրահամ ջրերի մոնիթորինգի և պահպանման գործում"